

Այ՛ հրատարակութիւնս մինն կիրակի օրեր .
Տարեկանն է կանխիկ Ա՛ աւտիճանի լաւանորդարութեան հա-
մար մէջ ռամանեան տեկի՛ իսկ է՛ աստիճանի թաժանորդարութեան
համար կէս ռամանեան տեկի՛ Դուրս գայածներուն ծախքը անողին
կրպ ի՛ :

Եւ բոլորեան քաղաքայ համար 30 փրանգ .
Հատը **40** փրանգ .

Նամակ կամ դրուժինն պէտք է ուղղել առ Խմբագիր-Տնօրէն Մ. Իսախանեանին Կինճանճըրաւ եօգուշտու, Ասորդր խան Ս. Էլի, Նիկիդոսեանի Տպարարնը կամ Պաճճէ դարաւ Երաւաճաւ Պօղոս եւ Զակոյր աղայից իմանալը :

Անվագար Ժրար եւ հարմակ կը մերժուին : Զեռագիր եւ չի տպուիր : Դանձուլման ապր մէկ անդամի համար 3 դրշ. է : Աւելի անդամներու համար սակարկութիւն կըլլայ :

ፊ.ኮ.ኪ 4

ᄃᆞᆫ ᄇᆡᆯᆺᆫ ᄃᆡᆮᆺᆫ

1887 ՅՈՒՆԻՍ 7

ԲՐԻՍԵԼՅԱՆԻԹԻՒՆ.

Վերաբնակեցնելու օրէնք է : — Ար-
դար զխոստեցնելու օրէնք : — Յուսիս ար-
քայ օրէնք : — Նահապետեան խնդիր :
— Սեղեւորութիւն : — Հարանեկան :
Հանդանակութիւն — Հոյկակուն Արիարան :
— Կորակակ (խնդիր արամեց ինձ Դրիգոր) :
— Այլ եւ այլք : — Զարածալիք : — Քա-
ղարակուն : — Աղդալին : — Վէպ (ժողովրդա-
րանիտը) քրքի ձեւով : — Դանտալունք :

ՎԵՐԱԲՆՆՈՒԹՅՈՒՆ, ՊԼՑԻ Ե՛

Աղբոյի մաշտանկոն անձերէ
սմանք նպաստուար և սմանք տնը-
ւոտտ կարծիք կը յայտնեն սյ. մա-
սին :

Վերջին կարմիրն՝ որ զօրաւոր
պաշտպաններ ունի, տիրող լինել
կր թաւի:

Կրնայ բլլայ որ այդ կարծիք
օգտակար լինի ինչ ինչ տեսութեամբ
և իրր հեռեւութիւն մաստաքն
ուի իմէ Յահմանադրութիւնն , իւր
արդի որոյմաններով , փոփոխու
թեան և որբազրութեան պէտք չու
նի :

Կրճանք հասկնալ թէ Սահմա.
նապարտութենն — սնդուշտ կտրող
ձեռքով մէջ — գործադրելու է :

Բայց երբ մօտենալ խեղդոյն մէջ,
պիտի տեսնուի թէ ներկայ վարդա-
թխնն ալ զգացած է վերաքննու-
թեան պէտքը, որովհետեւ կընտրող,
կտակաց և վանքեից խորհրդոյ
որդաւորներն կը կատարուին Տնտե-
սական խորհրդոյ ձեռօք:

Մենք զվարչութիւնը քննողա-
տելու նպատակու. չենք յարուցա-
նել դոյս խնդիր, այլ հաստատելու.
համար թէ՛ նոյն իոկ Պատկ. վար-
չութիւնն՝ Ել զգացած է վերաքննա-
թեան պէտքը, որ անթիւտելի է, և
ինք (վարչութիւնն) իւր փոքրած

4. Գործադրության արդյունք է դարձնա-
 կան ուղղութիւնն ինչ որ առաջ ազդեցին
 գործող :

Ասկոյն բանաւոր է որ պարզի-
որ կէտերու փոփոխումը — իբր օրի-
նակն ինչ իր — Աղջ. Ժողովոյ մի-
ջոցաւ կատարուի, որ միանգամայն
օրէնացրի պարտան կը վարէ :

Անցնինք արիւշ կէտերու :
 Գործաւուր թեւով հաստատուած
 է իմ մեղի պէտք եղածն է միայն
 շատ դորժ և ոչ իմ շատ խօսք :

Զայր կէտ երկօրօրէն բացաւ.
Բեշտ. հարկ չկայ:

Յոյսանի է թէ 140 թիւը չափս է
կրիստոսեանի թիւան համար :

Այլ թիւ կրնայ զեղշուի կամ
կէտաւ կէտ և $\frac{2}{3}$ իջնելով, որով
հետեւ — չքանք անկարելի — գէթ
գժտարին է գտնել 140 անձ որ Ե
րեւոթաբանութեան պաշտանին պա-
հանջած հանգամանքներն օճենան
և կարող լինին Ազգ. ժողովոյ աշ-
խատութեանցք ծառնակելու ճշիւ

Այնպէս կարեւոր են յանձն ըն-
դրական իրաւունքի գոյնելը հա-
մար ընդոյ յիսն պայմաններ՝ որ առ-
ջույն պէտք է որոնուողքի լինին
ինչպէս որոնուողեալ է սղոյ պայ-
մանք:

Ղարալուսի եան անդամաց թիւն
ալ նոյնպէս պէտք է զեղչել, զէի
կէս առ կէս, որովհետեւ մանուանդ
մեր մէջ խիստ դժուարին է ամեն եր
կու տարին անդամ մը 14 եկեղեցա
կան և 14 աշխարհիկ անձ դանել
որ վարչական յարմարութիւն, վար
ձառութիւն և դործելու յաջողա
կութիւն ունենան -

Ուր խոյունք մանասանդ Սահ,
մածաղբու խեան մէջ ոչ—վերքն արեւ
լիւ խեան արտաճարութիւնն, որ
բոլորովին աշխարհար է մեր վիճա-
կին, որովհետեւ մենք արդէն դժ-
բաղդ տարաւ վարչական մայրոց սով-
կը կրենք:

Երոյնպէ՛տ, Թագաւորին ձառտակա
բարբոթ թիւնն ալ որքա՛ց բոթ թեան
կամ բարեխիղճմուն ալ տր ունի :

ՏՈՒՆԻՔԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԻՐ ՔՈՒՐԻՍԵՐ
ՀԱՐԻՔ՝, որ կ'ստանայ մոգովորդէն
զանազան անուաներով նպաստներ
ի սէնտա թաղային պիտոյից, բայց
համարատու է միայն Տոնեստիան
Խորհրդայն, որ իրեն ներկայացնու
հաշու եղողքին մէջն գումարները զբն
նեկէ յետոյ կը վաւերոյնէ :

Տեղանի է թէ համարադու-
թեան տղայիւի եղունակ մը ոչ քա-
նուսը է և ոչ գործնական :

Ա՛ր թողունք բարոյակուն հա-
մարտաւուրթիւնը՝ որ դորձնակա-
նապէս կը մշայի իւր բացակայու-
թեամբը :

Անշուշտ օգտակար է և փորձա-
կան որ ժողովուրդն իւր քունով
քնորէ ինքորով ժողով օրուեալ
թաւով որք կատարեն Թագ. խոր-
հրդոց ընարութիւնը , ելքն ու
մուտքը օրօշեն, հսկողութիւն ի գործ
դնեն և յետ ստուգելու հաշուե-
ցոյցի հրդ.ութիւնը՝ Տեաեհասկան խոր-
հրդոց զստերացմանը ենթարկեն :

Ասանք այնպիսի կէտերէն, որոց կտրեւորութիւնն և ոգտակարութիւնը անհերքելի է, ինչպէս անհերքելի է առաջնօրէակսն ուղիղ դրութեան ժողովրդեան պէտքը, որովէ պիտի խօսինք առանձին յօդուածով, և այս ամենը կը ծառայեն հաստատելու թէ՛ Սահմանադրութեան վերաքննութիւնն արդարեւ պէտք մ'է, որովհետոտաւոր է Հաստակաց կործինքն, և մենք կթիւնորաւ արձագանգը կը լինինք պատճառն այն է թէ իրաւացի կը գտնենք:

ԱՐԳԱՍ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Ազգ. ժողովոյ վերջին նստին մէջ
մեր զգացած տալաւորութիւններէ
մին նորմէ: Հետեւեալս թեանց դաւ
գարուսր:

Ulmus campestris

մ'անշուշտ պէտք է խորշի ձևակերպումը՝ որ «ն» համար քեթեաները բաներ են, մինչդեռ բուն պէտք եղածն է օգտակարութիւնը:

Կը հասկնանք թէ Բացման եւ Գալման ճառերը զէթ մեզի համար աւելորդ բաներ են, բայց պակասեալ՝ այն է, հրաժարեալ՝ վախճան եւ զաւարեալ եւ դաւարելի երեսփոխանաց տեղ նոր ընտրութիւն կատարելու հարկն ձևակերպութիւնն չէ, այլ պարզապէս օրինակն տրամադրութիւն մը, որ պէտք է ժամանակին ճշգրտութեամբ կատարուի:

Ընտրութեանց տեղեկագրերը չը կային Ազգ. Ժողովոյ սեղանին վրայ, որովհետեւ ընտրութիւն կատարուած չէ, և մենք դրամանք տեսանք թէ Ատենապետ Էֆէնտին բոլորովին լռութեամբ անցաւ այս կէտի վրայէ, մինչդեռ, ըստ Սահմանադրութեան և ըստ Ներքին Կանոնագրի՝ իւր պարտքն էր՝ որոց որ անկէ՝ յիշեցնել և յանձնարարել:

Եթէ այլ ևս նոր ընտրութիւն պիտի չկատարուի և արդէն ընտրութեալ մնայուն և միշտ անփոփոխ երեսփոխաններ պիտի ճանչցուին, խնդիրն յայժմամբ իր զոյնը կը փութէ, Սահմանադրութիւնը կը դադրի Ազգ. Սահմանադրութիւն ըլլալէ, Ազգային Վարչութիւնն երեսփոխանական ըլլալէ և արդի երեսփոխանութիւնն ալ Ազգային Ժողով ըլլալէ:

Ասոնք ի հարկէ անհիմն ենթադրութիւններ են, բայց կրնան օր մը հետեւութիւն ըլլալ և նոր ընտրութեանց համար մեր դիտողութիւնն ալ չկրնար ըստ իր թէ անհիմն կամ անարդար է:

Եթէ սահմանադրական ենք, սահմանադրապէս ընթանանք, եթէ սահմանադրական չենք, Սահմանադրութիւնը ծրարենք. սակայն անոր տեղը ինչ դնենք:

Շիտակը խօսելով՝ այսպիսի ընթացք մը քննադատելի է, և շատ ցաւալի է որ այսպիսի դէպքեր տեղի կունենան չենք դիտել ինչ պատճառաւ:

Նոր ընտրութիւնը եթէ մոռացմամբ յետաձգուած են, պէտք է որ անյապաղ հրահանգ զրկուի իսկ եթէ յարգելի և օրինաւոր պատճառ մը կայ, յայտնուելու է, որպէս զի այլ ընդ այլոյ ենթադրութեանց և անհաճոյ քննադատութեանց հարկ չմնայ:

Որոց որ անկէ ուշադրութիւնը չը հրաւիրենք:

ՅԱԻԱԼԻ ՊԱՐԱՊԱՅՍԹ ԾԸ

Սոյն խորագրոյ ներքեւ կը յայտնենք այն խորին ցաւ եւ վիշտ, որ իրաւամբ պատճառած է Խեփյը-Նեփէֆէ տօնին օրը և Կ. Վահագնութեան Ղալաթիայէ

անցած պահուն տեղւոյն վարժարանի աշակերտաց բարեւի չլինալն, որ հարկաւ խիստ ցաւալի մոռացութեան մարդիկնք է:

Այսպիսի անհաճոյ պարագայ մ'անշուշտ տեղի չէր ունենար, եթէ դէթ վարժարանին պաշտօնէութիւնն արթուն դանուէր եւ յիշեալ վարժարանի աշակերտները բարեւի կեցնէր, որ քաղաքավարութեան տարրական պարտաւորութիւն մ'է հանդէս մանաւանդ մեր լուսավոր եւ բարեպետ Սուրբան Ապտ-Էլ-Համիտ կայսեր՝ Ոյր հովանոյն ներքեւ երջանկաբար կը վայելենք մեր ազգային եւ եկեղեցական իրաւունքներ կատարեալ ազատութեամբ:

Այս պատճառաւ եւս Հայ-Ազգն դադրած չէ եւ չդադարիր հանապաղ աղօթել իւր սիրեցեալ Վահագնային թանկագին կենաց եւ բարօրութեան համար:

Պարտինք յարել թէ Հայ-Ազգն խորապէս յուզեալ է տեղի գտած նոյն պակասութեան համար, որ դժբաղդաբար մոռացութեան անուշ եկած իրողութիւն մ'է:

Կը փափաքենք որ համայն Թաղ-Խորհուրդը կանխաւ միջոցներ ձեռք առնուն, որպէս զի միւս անգամ նմանօրինակ ցաւալի պարագաներ տեղի չունենան:

Շ Ա Հ Պ Ա Ղ Լ Ե Ա Ն Ի Ն Դ Ի Ր

Մանիսայի Առաջն. փոխանորդ Շահ պաղլեան Արթ. Տ. Յակոբ Վարդապետի անունն ստեպ կը յեղեղուի Ազգ. Լրագրաց մէջ իւր անսաստող Պատրիարքարանի հրաւերին:

Մեր վնասուածն այն չէ թէ Շահ պաղլեանի վերադրեալ ամբաստանութիւնը ճշմարիտ են թէ զրպարտութիւն, և Շահպաղլեանի ընթացքն արդարացի է թէ ոչ:

Մեր վնասուած կէտն այն է թէ Շահպաղլեան ի յարգանք Ազգ. Վարչութեան՝ պէտք էր անմիջապէս պատասխանել Պատրիարքարանի հրաւերին՝ առանց բնաւ յայտադրուի:

Շահպաղլեան եթէ իրաւունք ունէր իւր հետեւած ընթացիցը մէջ կրնար իւր արդարացումն ընել առաւանց իւր վրայ ըմբոստութեան աւրտն հրաւիրելու, որ հարկաւ աններելի է մանաւանդ եկեղեցականի համար:

Ազգ. իշխանութիւնն յարգելու մեն Հայ անհատի պարտաւորութիւնն է զոր պարտի կատարել, եթէ արդարեւ կուզէ զործնական ազգա. սիրութեան փորձը տալ:

Սոյն տարրական պարտաւորութիւն անշուշտ աւելի խնամով ի գործ դնելու են եկեղեցական հարք՝ որ իւրեանց վարուքն ու դործերովը օրինակ են Ժողովուրդին:

Շատ ցաւալի է որ Շահպաղլեան ըմբոստութեան տխուր օրինակը կու.

տայ, որ չկրնար արդարանալ և ոչ մի տեսակետով, և աւելի ցաւալի է որ Չմիւսնիւյ Ս. Առաջնորդն այս պարագայի մէջ իւր համարումն հակառակ ուղղութեան չը կը հետեւի, որ ճշմարիտն ըսելով՝ իւրեան պատիւ չբերելու երբէք:

Մենք կը յարգենք զՄեքիսեդեկ Սրբազան իւր արժանեացն համար և կը գնահատենք իւր օգտակար գործերը, բայց աւելի կը յարգենք օրինաւորութիւնն և ուղղութիւնը, որ պէտք է փայլին մեր ազգային ամեն գործոց մէջ:

Պարտի դիտեալ Մեքիսեդեկ Սրբազան թէ շատ կը պատկանայ, եթէ Ազգ. Վարչութեան որոշմանը դէմ շարունակէ հակառակելու փորձ փորձել:

Առ այժմ՝ այսչափ:

ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ

Գ.

Եթէ Արմաշու Գեր. Ս. Վանահօր առ մեզ ուղղեալ նամակն հրատարակեցինք Նիրակնօրեայ Հայերիքի նախորդ թուով, պատճառն ոչ թէ մեր անձին նկատմամբ տածած յարգանքն հռչակել է, այլ յայտնելու համար թէ՛ Ն. Գերապատուութիւնն եւ Պատ. Միաբանութիւնն տարածեց չէին սիրոյ եւ միութեան ընդ Նիկոմիդիոյ Գեր. Ս. Առաջնորդին եւ վիճակայինս:

Բարեբաղդ ենք որ միութեան գործին մէջ մեր փոքրիկ ծառայութիւնը զոր ի մասնաւորի խնդրած էր մենք Ազգ. Վարչութեան Պէտք. Վսեմ. Յ. Նուբեան Էֆէնտին, ապարդիւն չմնայ եւ յանձին Գեր. Ս. Վանահօր եւ Գեր. Ս. Առաջնորդին՝ միութիւնը այլ եւս կատարուած իրողութիւն մ'է, որ անշուշտ օգտակար է եւ պիտի լինի թէ վաղուց եւ թէ վիճակին նկատմամբ:

Գեր. Ս. Առաջնորդն, ինչպէս ըսինք, ստուգիւ ժողովրդասէր, պարկեշտ, աշխատասէր, գործունեայ եւ անշահախնդիր եկեղեցական մ'է, կը գործէ յօգուտ իւր վիճակայնոց եւ ոյժ կուտայ կրթական գործին:

Կաշխատի եւ կը համոզէ ամենուրեք դպրոցաց համար հաստատուն եկամուտներ հայթայթելու:

Նիկոմիդիոյ Ժողովուրդն ալ բարեպաշտ, ազգասէր, աշխատող եւ տնտեսագէտ է ընդհանրապէս:

Կան ի Նիկոմիդիա հետեւեալ ընկերութիւնք:

Բարեգործական Ընկերութիւն. — Նպատակ ունի քաղաքին երկսեռ վարժարանաց աղքատիկ մանկուոյն ձրի դրական պիտոյք մատակարարել:

Աստուգէան Ընկերութիւն. — Ընթերցասիրութիւն տարածելու նպատակաւ հաստատուած է եւ ունի բաւական ճոխ

խելացի լինել հարկ չ'էր. ուստի նա կապ-
րէր Խաս-դիւղ, ուր ամեն տեղէ աւելի
կղզիացեալ կը գտնէր ինքզինք, եւ ար-
դէն իւր մեծագոյն հաճոյքն ցոյցի մէջ չ'էր
որ կը գտնէր նա, խաղա՛լ, առանց խղճա-
հարութեան, եւ կամովին կողոպտուիլ,
նորա բոլոր երջանկութիւնն կեդրոնացած
էր իւր թղթերուն մէջ եւ ընտանեաց
սէրն հրապոյր չ'ունէր իրեն համար,
խեղճ տիկին Հովհաննէ՛. իւր ամուսինը,
չ'էր կրցած գերծանել Վ. . . աղան իւր
մոլութենէն. կինը Վ. . . աղայի համար
հաճոյից առարկայ մ'էր եւ անոր խոր-
հըրդոց անսալ՝ ամօթ. հէ՛գ կին՝ որ
զգայուն էր արդէն եւ վշտակիր վկայ
վին յոր կը դիւրէին զինք իւր շողքորթ-
ներ՝ յաճախ հերարձակ, յարտասուս
շարժեալ կուգար գտնել Յակոբ աղան, տան
խնամակալն ու հայր Արտէմի որ իւր
փոքրիկ խուցին մէջ քաշուած կը ծխէր
ու կը խմէր տաքուկ սուրճն. կը խօսակ-
ցէին Վ. . . աղայի մոլութեան վրայ եւ
Յակոբ աղան կը ցաւէր, կը վշտանար.
հաւատարմութեան տխուր մ'էր նա, Վ. . .
աղայէ աւելի ինամը տանելով ընտան-
եաց վրայ եւ մեծ ուղղամտութեամբ
վարելով առսնին գործերն:

— Ա՛խ, — ըսած էր օր մը տիկին Հը-
ռիփսիմէ. — Գիտես Յակոբ աղա, ալ
սկսաւ ոչ թէ դրամով խաղալ, այլ կալ-
ուածներու վրայ . . .

— Գիտեմ, աւելին գիտեմ, պա-
տասխանեց բարի մտտակարարն:

— Պատմէ՛:

Եւ Յակոբ աղան նախ զլուսն շար-
ժելով չ'էր ուղած պատմել, յետոյ տիկ-
նով թախանձանաց վրայ այսպէս խօսած
էր.

— Անցեալ իրիկուն կը խաղար,
Մուրատ եւ Սարգիս էֆէնտիները պահ
մը զինքը նստեցուցին հայելոյն յառաջ,
եւ վատերը դայս ընելով հայելոյն մէջ
աղային թղթերը կը տեսնային. նոյն խա-
ղին մէջ կալուած մ'ալ կորոյս:

— Սակայն չը յայտնեցի՞ր այդ դա-
ւաճանութիւնն:

— Այո՛, բայց նա պատասխանեց,
« զիս որո՞ւ տեղ ես դրեր, դուն չ'եղար
ինձ խելք սովորեցնող, աչքիս մ'երեւար »
Այս եւ այսօրինակ խօսակցութիւն
մ'էր որ կը դառնար միշտ տիկին Հովհան-
նէի եւ Յակոբ աղայի միջեւ, եւ տիկինն
կ'արտասուէր ու Յակոբ աղան սփոփել կը
ջանար անոր վիշտը:

Անուղղայ էր Վ. . . աղա եւ իւր
հետեւանքն հաստատեց բարոյականի այն
առածն թէ՛ մոլութիւնն կը պատժուի,
կորուսելով մեծաքանակ արժէքներ ուրիշ
խաղամոլներու հետ. միւս կողմանէ իւր
շահուց աղբիւրքն նուազելով՝ նիւթական
մեծ տաղնապ մը կրած էր, զոր իւր առ-
տընին կենաց մէջ զգալի չ'ընելու համար՝
փոխառութեանց դիմեց որք եւս քան
զեւս զատթարացուցին իւր վիճակն, չը-
քաւորութիւնն չ'ուշացաւ, տիկին Հովհա-
ննէ իւր երկու որդիքն առած հաստատ-
ուած էր յԱգրիանուսօլիս, Աշոտ՝ Անդ-
րանիկը, իւր հօրը նախկին դրից շնորհիւ,
պաշտօն մը գտած էր անդ, Վ. . . ա-
ղա, իւր կործանման մէջ իսկ ոէգ ու խը-

րոխտ՝ Պերութ գնաց բազմախնդրական
ձեռնարկներով եւ իւր մահը կարճեցոյց
իւր կրելի տառապանքները:

(Շարունակելէ)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Աղքատիկ մարդ մը կը մերձե-
նայ արքայութեան դրան. Պետրոս
առաքեալը ասոր կը հարցնէ.

— Ուղեակ, քաւարան զնացի՞ր:

— Ոչ, սակայն ամուսնացած էի:

— Ոհ, ամուսնանալն ալ քաւարան
երթալ ըսել է, մտի՛ր ուրեմն, մտի՛ր,
չատ տրժանի ես:

Աղքատին ներս մտնելէն ետքը
ծեր քաղաքագետ մը կը ներկայանայ.
Առաքեալը իւր հարցումը անոր ալ
կը կրկնէ.

— Ոչ, քաւարան չգացի, սակայն
ի՞նչ պէտք կայ հոն երթալու, դեռ
հիմա ներս ընդունեցիր մարդ մը՝ որ
ինձի պէս քաւարան դացած չէր:

— Բայց այն մարդը ամուսնացած
է եղեր:

— Աղէկ ա՛, ես ալ երեք անգամ
ամուսնացած եմ:

— Ուրեմն կորուսէ՛, կը գոչէ Ա-
ռաքեալը, արքայութիւնը յիմարաց
ապաստանարան չէ՛:

Պարտքի համար բանտարկեալ
մը օր մը լուր զրկեց իր պարտա-
տէրին թէ գոհացուցիչ առաջարկու-
թիւն մը ունի, եւ երբ տեսաւ զնա՝
— Պարոն, ըսաւ, մտածեցի այն կե-
նաց վրայ՝ զոր բանտիս մէջ կը վա-
րեմ, շատ սրտնեղութիւն կը պատ-
ճառէ ինձ, կը ցաւիմ որ ամուսկան
30 ֆրանքի ծախսոյ պատճառ եղած
եմ՝ ձեզ բանտարկութեանս համար,
տրժանապատուութեանս կը դպչի
ձեզ բեռ լինել, մանաւանդ չեմ գի-
տեր թէ ե՞րբ պիտի վերնայ սոյն բե-
ռը, ուստի կ'առաջարկեմ ձեզ որ նախ
զիս բանտէն հանել տաս:

— Է, վերջը:

— Վերջը, ամուսկան 30 ֆրանքի
տեղ՝ զոր կը զրկէք բանտին տեսչին,
ինձ 15 ֆրանք տուէք:

— Բայց ի՞նչ օգուտ պիտի ունե-
նամ ատկէ:

— Ինչ օգուտ պիտի ունենաս մի՞,
կը հարցնեմ, մնացեալ՝ 15 ֆրանքն
ամսէ ամիս քեզ ունեցած պարտքէս
կը ղեղչենք, որով ես ալ կ'ազատիմ
դուն ալ:

Վերաբոյժ մը արտորնօք մար-
դու մը կանչուեցաւ որ մենամար-
տութեան մէջ թեթեւ վերք մը ըն-
դունած էր: Վերաբոյժն աչկերտին
հետեւաւ ու վերքը քննելէ ետքը
աչկերտին հրամայեց երթալ խանու-

թէն այն ինչ սոցեղանին բերել, վի-
րաւորեալը թէեւ վերքին թեթեւ լը-
լալը կղզար՝ սակայն վիրաբուժին
իրարանցումէն այլայլելով ըսաւ, —
Պարոն վիրաբոյժ, չեմ կարծեր որ մեծ
վտանգ մը ըլլայ:

— Ընդհակառակն՝ մեծ վտանգ
կայ, եթէ անկերտս չուտով չերթայ
սպեղանին չքերէ:

— Ինչէ՞ն

— Վտանգի կը վախնամ որ անոր
դալէն տուաջ վերքը կը բժշկուի
կանցնի:

Մեծ բանաստեղծի մը կերթայ
տկար բանաստեղծ մը ու կըսէ.

Տէր իմ, բանաստեղծութիւն մը
ուշիմ զոր պիտի տպագրել տա՛մ, այլ
կուղեմ որ անգամ մը աչքէ անցնէք:

— Քանի մը օրէն եկէք որ պա-
տասխանն առնուք:

— Շնորհակալ եմ, ըսելով կը մեկ-
նի, եւ քանի մը օրէն կը ներկայանայ

— Ի՞նչպէս գտաք:

— Քերթուածդ ինձի չափէն տ-
ւելի երկար երեցաւ:

— Շնորհ ըրէք, ճար մը ըսէք թէ
ի՞նչ ընելու եմ:

— Ուրիշ ճար չի կայ, քերդուա-
ծիդ կէսը պէտք է կործնեցնել մէկ-
դի ձգել, մնացածն ալ ամենեւին
ի լոյս չ'ընծայել:

ԳՈՂ

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ԱՌՏՆԻՆ ՏԵՍԵՐԱՆՆԵՐ

Երէկ բարեկամներէս մին կը
հարցնէր ինձ:

— Կիրակնօրեայ Հայքէսթին մէջ
ալ պիտի գրես:

Եւ ես կը պատասխանէի.

— Այո, Կիրակի առաւ Հայքէսթին
մէջ պիտի գրեմ:

— Առաջին կարգի յօդուած
պիտի գրես, երկրորդ կարգի՝ պի-
տի գրես թէ երրորդ կարգի:

— Չեմ հասկնար:

— Չի հասկնալու ի՞նչ կայ,
Կիրակնօրեայ Հայքէսթին երկու կարգի
բաժանորդագրութիւն բացած է,
առաջին կարգի բաժանորդագրին,
երկրորդ կարգի բաժանորդագրին,
բայց աղքատներու համար մուցած
է բաժանորդագրութիւն բանալ. Եր-
կաթուղեայ տնօրէնութիւնն ալ երեք
կարգի ձեռն ունի: Տարակոյս չկայ
թէ առաջին կարգի յօդուածներուդ
մէջ թաւշեայ բազմոյններ, հայելի-
ներ, սեղաններ, վարագոյններ եւ
անգղիական գորգ եր պիտի գտնուին,
երկրորդ կարգի յօդուածներուդ մէջ
չունայե բազմոյններ եւ վարագոյններ
միայն պիտի տեսնուին. իսկ երրորդ-

կարգի յօդուածներուդ մէջ միայն փայտէ բաղադրուած, ընկողի կեղեւներ, ձէթի հատեր և ոչիւնք պիտի գտնուին :

— Ձեր կարծիքէն չեմ. կիրակ. նօրեայ Հայրենիքին նպատակն է ազգին ծառայել. արդ ազգին ծառայելու համար քաջալերութեան կարօտ զգացած է ինքզինքն, և այդ տնօրէնութիւնն ըրած է, տնօրէնութիւն՝ որ առանց վնաս պատճառելու հարուստ բաժանորդաց՝ կրնայ նշանակել կիրակնօրեայ Հայրենիքին ծառայման :

— Ծնորհակալ եմ ձեր տուած բացատրութեան :

— Ինչ նիւթի վրայ պիտի գրէք :

— Ընտանեկան նիւթերու վրայ :

— Կը շնորհաւորեմ :

— Ծնորհակալ եմ :

— Ի տեսութիւն :

— Երթաք բարով :

Ճանաչող շարունակեցի մտախոհ մինչեւ որ տան մը վերի յարկէն առջեւ նստուած թոյլ մը ջուրէն սթափիմ :

Վեր նայեցայ :

Ինչ տեսնամ :

Քառասնամեայ գիրուկ կին մը. ծունկերը բաց, թեւերը բաց, մազերը չստնտրուած և չհիւսուած, վրայէն ճերմակ շապիկ մը հագած, ոտքերը բոլորի :

— Ներեցէք, բաւ ժպտելով, քիչ մնայ որ ձեր գլուխն ի վար պիտի թափէի ջուր :

— Վնաս չունի, պատասխանեցի :

— Բայց ջուրը մաքուր էր :

— Ծնորհակալ եմ :

— Տաք ալ չէր, չէիք խաշուեր :

— Երախտագիտութիւնս կը յայտնեմ :

— Աֆ կընէք :

— Բան մը չէ :

— Կարծեմ քիչ մը թրջեցաք :

— Սանկ քիչ մը :

— Կաղաչեմ, մերթաք, վար իջնեմ ու սրբեմ :

— Ձահմէթ կընէք :

— Տէր ողորմեա, ինչու դահմէթ ըլլայ, պարտքերնիս է, սպասեցէք :

Սպասեցի :

Վար իջաւ մաքուր լաթ մ'ի ձեռին և սրբեց վերարկուս :

Սպիտակ և պարարտ ազդեր, թեւեր ու պարանոց. կարելի եղածին չափ զոռացայ ծածկել անցնողներէն այդ ազդերուն, թեւերուն ու պարանոցին նայելու :

Ծնորհակալ եմ ըսի երբ լինցաւ դործողութիւնն ու շարունակեցի ճանաչում :

Մտածութիւնները նորէն սկսան :

Այս կինը, կրակի, դիտմամբ զիս թրջեց որպէս զի իւր գեղեցիկ թեւերը, ազդերն ու պարանոցն ինձ ցոյց տայ, կինը, կրակի, ա-

մեն միջոց ի դործ կը դնեն էրիկ մարդոց ուշադրութիւնը գրաւել իրենց գեղեցիկ և ամենէն աւելի աչքի զարնող կողմերուն վրայ. Յիշեցի ինչպիսի հովուի մը խօսքը :

— Պէ աղբար, կըսէր այս հովուին ինձ օր մի. էրիկ մարդիկ այսքան մեծ դործեր կը տեսնեն, տուներ կը շինեն, պալատներ կը կառնեն և ոչ ոք անոնց ոտքը կամ ձեռքը տեսած է, մինչդեռ կանայք եթէ տախտակ սրբելու ելնեն՝ իրենց ծունկերն, թեւերն ու կուրծքն կը բանան :

Իւրաքանչեւ տուի հովուին :

Հարուստ կանայք իրենց մեծափարթամ ճիւղաթեւեր, դարդաբանօք, ծանրագին հանգերձներով և աղամանդներով կը ջանան իրենց վրայ ուշադրութիւն հրաւրել. իսկ աղքատներնոր դարդարութեամբ, պճուրկ համար դրամ չունին, կը շատանան ծունկերը թեւերն ու կուրծքը բանալով : Ասոնք ճամարութիւնը մերկ ներկայացնել կուզեն, մինչդեռ անոնք ճամարութիւնը կը դարդաբանն ու կը պճնեն աւելի ազդեցութիւն ընելու համար աչաց վրայ :

Բայց երբ տախտակ սրբող աղքատ կնոջ ծունկերը բարակ ըլլան՝ խնդիրն կը փոխուի. այն տոնն ցոյց չտար քեզի ծունկերը. կանայք մեծ վարպետութիւն ունին իրենց տեղ կողմերը ծածկելու մասին :

Նախ և առաջ ամենուս գիտցած բանն է թէ ինքզինքը ցոյց տալ ուղի կինը — եւ կին մը չկայ որ չուզէ ցոյց տալ ինքզինքը — միշտ իրմէ նուազ աւելի տղեկ կնոջ մը հետ կուզէ դուրս ելնել, և ընդհակառակն, տղեկ կին մը բնաւ չհաճիր իրմէ գեղեցիկին հետ պտըտիլ եւ պատճառ մը կը գտնէ, այսօր հիւանդ եմ կրսէ կամ այսօր դուրս ելնելու փափար չունիմ կրսէ կամ այսօր ծունկերս կը դողան կոր կրսէ. վերջապէս՝ կրսէ ինչ որ պէտք է ըսել իրմէ գեղանի կնոջ մը հետ դուրս չելնելու համար :

Հարուստ կիններն՝ որ իրենց գեղեցկութեանը շատ վստահ են՝ բըռնութեամբ իրենց հետ կառնեն իրենց տղեկ սպասուհիները, որք կարելի եղածին չափ իրենց տիկինէն տասը քայլ հեռուէն կը քայլեն որպէս զի էրիկ մարդոց աչքին չզարնէ իրենց տղեկութիւնը :

Այս է պատճառ որ տիկին մը իւր սպասուհիոյն հետ պտըտած ժամանակն ետեւը կը դառնայ յաճախ և սպասուհիոյն կրսէ :

— Ճանմ, ինչու հեռուանց կուգաս կոր, ետեւէն չգաս :

Կուգամ կոր, տիկին, կուգամ կոր, տահա ինչպէս գամ :

Ախ, այս կանանց վրայ շատ կը խնդամ ես երբեմն :

Այն կինն՝ որու քիթը, բերանը պղտիկ է և աչքերը տղեկ ախոյ :

Կը դնէ աչքին որ չ'ոտնուին, իսկ այն կինն՝ որուն աչքերը գեղեցիկ են և քիթը բերանը մեծ՝ միշտ թաշկիւնակով քիթը բերանը կը դնէ և աչքերով կը դործէ : Խոշոր և կարծր ձեռքեր ունեցող կիններն միշտ և ամեն տեղ ձեռնոց կը դործածեն, մինչդեռ փոքրիկ և փափուկ ձեռներ ունեցող կիններն առիթ կը փնտրեն :

Կը փնտրեն, առիթ կ'առնեն իրենց փափուկ մատներն ցոյց տալու համար : Փոքրիկ ոտք ունեցող կիններն ընդհանրապէս ծունկ ծունկի վրայ կը դնեն իրենց ոտքերը ցոյց տալու համար : Կրնայի տակաւին շատ օրինակներով հաստատել մեր կարծիքն եթէ անոր հակառակողներ գտնուէին :

Ինչ խայտառակութիւն է առ :

Ինչո՞ւ համար կին մ'իւր ծունկերը, թեւերն ու պարանոցը ցոյց տալու համար տախտակ սրբելու ըստապի, իմ վերարկուս թրջե եւ ստապէ զիս ասանկ դիտողութիւններ ընելու : Ինչո՞ւ համար համոզուած չըլլան մինչև հիմա թէ՛ կին մ'որ համետ, պարկեշտ, ժրտան և աղքատաւոր է, ունի փափուկ ձեռներ, փոքրիկ ոտներ, սիրուն աչքեր և հըրապուրիչ դէմք : Ինչո՞ւ հասկցած չըլլան թէ մարմնոյ գեղեցկութիւնն ոչինչ է հոգւոյ գեղեցկութեան քով : Ինչո՞ւ օրոված չըլլան թէ կին մը կրնայ շատ գեղեցիկ ըլլալ և միանգամայն ատելի, եթէ օժտուած չէ հոգւոյ գեղեցկութեամբ :

Այս Բնականներն մեծ ցաւ եղած են ինծի և միշտ սիրտս կը կրծեն ու կը մաշեցնեն. ամեն օր անոնց վրայ կը խորհիմ, կը մտածեմ, կը խօսիմ :

Կանայք, ինչո՞ւ չէք սորվել ու չէք հասկնար այս Բնականները :

Հոգ չէ, ես կ'սորվեցնեմ ձեզի, ես կը հասկնեմ ձեզի :

Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

Միջագիւղ 4 Յունիս 1887

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

(Առանձին գրքեր)

Գրքագիր

Մայիս 31ին Ազգ. Ժողովոյ մէջ 4 նշանաւոր բժիշկներ + մասնագէտներ խորհուրդ էր. կը խորհուրդ Որեւելքէ որ հաճի տուի մը Ժողովոյ Բնական զրկել :

Նոյն

Պուրկուրեան Էֆենտի ձայնը խորհուրդ էր. կը խորհուրդ Որեւելքէ որ հաճի տուի մը Ժողովոյ Բնական զրկել :

Առանձին

Հրապարակին վրայ այս միջոցին

միայն Գրեգորյան անուանումը բանական է . կը կատարուի անուանի միջնորդի և վճարմանը կանխիկ են :

Տեղի Խն

Կը հաստատուի թէ թրանսպարուլո-ճարտար-շինական խիստ չափաւէտ վիճակահանութեան մը տոմսեր ի մասը հրապարակ պիտի հանուին ամենամիջին պայմաններով, որ պիտի գերազանցէ Պրադիկտի վիճակահանութեանը :

Բերայ

Փոքր աղջկանց համար գլխարկի նոր մոդէն է հին սոփիստիկ . փոքրիկէ առնուած լուրերու վրայ կը վստահացնեն թէ Խաչատուր Կանանց ձմեռուան գլխարկի նոր մոդէն պիտի ըլլայ :

ԿՆԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՅՆԵՐ

Ընելիքդ դուն կիտծիր , ուրիշի մընը :

Ամենէն մենծ հիլէն չիտակու թինն է :

Էրիկ կնիկն կուրի խառնուողը պղտիկ կիյնայ :

Մէկատար չիտծողին տասը մատդ ալ մոմբնես նէ , կէնէ իւրյ-մէի չիյաէ :

Աստուած մարդուս քէօռ քէօռ մատ աշկոտ չղսեր , էղածը մեղի էօրինէի է :

Ամեն մօրուքով տեսածդ հարդ մի՛ կիանար :

Ո՛վ որ օտարի ետմտա չէ կե-րեր , տահա հոսմ է չէ էփեր :

Տունդ սըխ կոցէ , տրոցինդ կող մի՛ պնեն :

Տուն մ'առնէր , տրոցին առ :

Յէ՛դ լիցուր տէ անանի կար-դըւելու էիր :

Յաջողութիւնը սաղանախի կըլ-մանի , էլէր ամանդ չի լիցունես նէ , ճուրսուկ կը մնաս :

Մարդը մարդուն էրէս կը նա-յի ամա , Աստուած մարդուն սիրտը կը նայի :

Մարդու չի հաւնողը ինք ալ մարդերէ չի հաւնուիր :

Փարան առուծի տղա է կերթայ , լաքին աղէկով կէշով ինչ ընես նէ ան կը մնայ օրթան :

Ջ Ա Ի Ե Շ Տ Ա Կ Ա Ն Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Ամբարտաւանութիւն . — Հա-րուստին արժանիքը :

Սուտ . — Ճշմարտ հարուստի բերնին մէջ :

Ճշմարտ . — Սուտ՝ ազգատի բերնին մէջ :

Տաղանդ . — Գլխուդ մէջ մի՛ փնտռեր , այլ քսակիդ մէջ :

Կեղծաւորութիւն . — Ե՛կէ ու-նիս , բնաւ հոգ մի՛ ընէր :

Պատիւ . — Ամուր բռնէ որ չի փախի :

Սիրահարութիւն . — Անցադէր դրախտայով ամուսնութեան :

Ամուսնութեան զբաղմունք . — Հի-ւանդութիւն դրախտայով ամուս-նութեան :

Սէր . — Ամուր սէրին տեղն է Սարգեար և ձմեռը սերին տեղն է Էլիպ :

Քսու . — Հաւատարիմ բարե-կամ :

Բանասեր . — Ճշմարտ բա-րեկամ :

Խառնակիչ . — Խելացի բարե-կամ :

Անկեղծութիւն . — Լուէ , ա-պուշ , հիմա անանի բան չիկայ :

Բարեկամութիւն . — Շահ՝ դոր կը փնտռեն մարդիկ բարե տալու և առնելու մէջ ալ :

Վերահանութիւն . — Կերևայ թէ տխար մ'ես դուն որ կեցեր պաշտեղած բաներու վրայ կը խօ-սիս :

Մ. Գ.

Ճ Է Հ Է Զ

(Ծառնուկութեան քէս Է՛ն 3)

— Ան չէ՛ ամա , գոչեց Պիտոս հանրմը սաստիկ բարկացած , տալոջդ հարսերուն հողած մանթօնին մէթ կրնես կոր նէ , իրենց էրկանը շինա՞ծին է , եօխա իրենց պարակ մանա-ծին կինովը շինած եւ . արարատ աշ-խարհին կիտծած մէկ պանն է քի , մի կուն կունկին մանթօն ծեր քէօշէ-յի իրիւթիւննին մանջը շինած է , մէկայինն ալ տօղրոյի մէխանէին իրեղկեհտարը , հասկցա՞ր հիմայ :

— Քա մեղաներ ըլլա՛յ քի սուտ է , հա՛յոէ , չոր փառին արուն քսող մանտա՛ւ , պերանդ օխտը ճուր վը-լա տէ անանի հարսերուս անունը պերանդ առ , քա վա՛յ , սուտ մը կ'յ ամա , մարիկ , հեռունէր ըլլայ , ափիկայ պոչովն է , սալուն չալտաք հա , քօւրուկներ , սուտ է , պէթեր պէթերոց սուտ է :

— Բիճա կընեմ , սուտ էղիք , վերջ ըրէք ատանի խօսքերը , ըսաւ կնքամար հանրմը ուրիշ ծրար մը հանելով սնտուկէն , տահա էղ մը պան կայ նայուելիք , տուք կայներ իրարու հետ հաճակաւութիւն կը-նէք , Արման տուտու , ես քեզի շաշ-միշ կըլլամ քի ճահիլին խելք կը տը-նես տէ՛ ճուղապին ճուղապ կուտաս , խառնմ հանըմ , ինչ կընես հոս , կը

քնանաս հա՞ , աշկը պա՛յ , մատ է-կուր , սա պօխճան ալ տուն քսիէ :

— Քա կեմ , ըսաւ խառնմ , և իրեն նետուած ծրարը բանալով մէ-ջինները անոր տար վրայ նետեց :

— Քա Նունուֆար ապա , աս ի՞նչ պիչիմ պան է , սառնճալ է ըսեմ չէ , շապիկ է աճապա քա թէկ-զի տուտու , հոգիս սիրես ըսէ , ի՞նչ պան է ա :

— Աման ճանրմ՝ Նունուֆար , մէկն ալ պէտք է քի սրվոր ինչ ըլ-լալը ինծի հասկցունէ , նայէ մէյ մը տա արէնք կնիկ ես էղէր , աս էօր-նէկ պան տեսե՞ր է :

Կէօշէր այս միջոցին անկուն մը քաշուած բաշխիկ խիստ գեղեցիկ գորգ մը ուշի ուշով կը վնէր և ա-նոր վրայ գործուած պատկերներուն վրայ կըմայլէր . Պիտոս հանրմն ալ տուրս էլած էր , թէկզի , Կէօշէրի սայն զբաղումը տեսնելով , բարկու-թեամբ մօտեցաւ անոր , առջեւն գորգն առաւ ու մէկդի նետեց ըսե-լով :

— Էյ վալլահ սիրտիդ , Կէօշէր , ամեն մարդ աստին արմանքը դար-մա՛քր առեր կը տանի կոր այլէ-վայլէ պաներ տեսնալուն համար , դուն անցերէս պոճախը խալի կտորի մը վրայ կը նայիս ու կը նայիս , պարէմ օր չի տեսած մէկ պա՛նդ ըլլայ , էկուր հուսա , քեզի պաներ պաներ ցուցունեմ օր , իրա՛ւ չաշալատին տառնաս :

— Ուր է տեսնամ :

— Էկուր օր տեսնաս , քա Նու-նուֆար , ճիւղպէի պէս պան մը կար ծառքդ , ո՞ր է , ո՞ր դրիր :

— Էյ հիմակ խելքիս ծուն կու-գայ , ախճիկ , սառնճալ է ըսեմ պիտի ամա , էտեն ի վար սա քու-քոլէթան ինչ պէլա է , պէն սանա պիր չէյ սէօյէթիմ , նէ՛ օ նէ պո՛ւ . ասիկայ չէնքով շորքով ճիւղպէ է , քա թէկզի մէյ մը էլ սըվիկայ վրատ առ նայիմ :

Թէկզի կընէ կը հազնի . ամեն-քը քա՛հ քա՛հ կը խնտան , թէկզի՝ որովհետեւ շատ մը խնտան , տեսակ տեսակ ձևերով կսկսի սենեկին մէջ տատին անդին վազվզել . տար վրայ տան մէջ գտնուողները բոլոր՝ այր թէ կին վեր կը վազեն , սենեակը՝ որ արդէն լիցունած էր , ոտը կոխե-լու անդ անդամ չի մնար , գոռում , գոչում , իրարանցում , ամեն բան ցիրուցան , այս խառնաշփոթութեան պատճառաւ հարսին վրայ մարելիք կուգայ , հարսին մայրը այս բանը տեսնելով կաղաչէ կը պաղատի ճէ-հէղ տեսնողներուն որ քիչ մը դուրս ելնեն . Ասոնք մոիկ չեն ըներ , տա-հա նայելիք , ընելիք պան ունինք կըսեն . հարսը իրօք կը մարի , մայրը կը պօռայ , կուլայ . հարսին պարա-գայները ձայններն կը բարձրացնեն . դուրս ելէք , ճանրմ , ամօ՛թ է , չէ՛ք ամչնար , աս ձեր ըրածը ճէհէղ տեսնալ չէ , տիւպտիւզ մասխառ-

կուծին է. դարձեալ մօտիկ չեն բներ. ասէթ է օր հարսին ինկնելիլ վարձնա խոտսը աչիէ պիտի տնցը. նենք, ամա հարսը մարեր է. հոգ չէ, հէլպէթ, հարս լլլալը խօլա՛յ պան կիծաւ. մենք ալ վախալին մարեր է՛ք ալ, վառուեր է՛ք ալ, աստար սիւրիւ մը հալիս մենք տուրս ելլալ նուս, ի՞նչ հարսը տուրս էլլալ մօրը հետ մէկտեղ, զաւ օտա մը էրթա նստի, բրահաթնա, ճահիլ է, վրան սըխընթը կոխեց, եւ տահա մեր վախալին հարսերուն պէս հարս լլլալ նէ ի՛նչ պիտի ընէր (Շարունակեմ)

ԱՍԿԷ ԱՆԿԷ

Դասատու մը աշակերտներէն մէկուն ուղղած հարցմանցը և ոչ մէկուն պատասխան չառնելուն վրայ կ'ըսէ՝

Դուն բնաւ բան մը չի սորուեցա՛ր, երբէք հարցում մը չ'ես դիտերս:

— Հարցումներու մասին շատ բան դիտեմ, Պ. Դասատու, բայց ձեր հարցմանց պատասխանները միայն չեմ դիտեր:

— օ —

Դպրոցի մը տեսուչը աշակերտի մ'անվայել ընթացիցը նկատմամբ տեղեկութիւն ստանալով՝ զայն իւր ներկայութեանը կը կոչէ ու կ'ըսէ՝

Ախր՛ս, քեզի համար այնպիսի բաներ լսելը էի:

— Մի՛ հաւատար, Պ. Տեսուչ, ես ալ ձեզի նկատմամբ բաներ լսելիս ստիպեցի և ոչ մէկուն հաւատարցի:

ՎՐԻՊԱԿ

Նախորդ թուով հրատարակել սկսուած Նորավէպի առաջին տողի « յաջ » բառը պէտք է կարգաւ « յախ »: Այս վրիպակ տպագրական է, զոր կը վերականգնուի:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

(Արհեստագործ շահագործող)

Իսլամաւայի պատժական բացառիկ ծրարողը՝ զոր կառավարէր Անգղիական կառավարութիւնը՝ Անգղիոյ Խորհրդարանէն ընդունուեցաւ:

— Սերպիոյ Միլան Թագաւորը Պ. Ռիսդիլի յանձնեց նոր նախարարութիւն կազմելու պաշտօնը: Պ. Ռիսդիլ պէտք է Ռուսաստան կուսակցութեան:

— Իտալիոյ պատերազմական դործոց նախարարը 20 միլիոն ֆրանքի վարկ մը խնդրեց Երեսփոխանական ժողովէն՝ Ալբի-կէի զինուորական ծախուց չեւ մանաւանդ մասնաւոր զորաբանակի մը կազմութեան համար իբր պահապան դօրք այդ երկրին մէջ:

— Ամերիկայէ կը ծանուցուի թէ ցորենի գինը շատ ինկած է ի Նիւ-Եօքս:

— Մոսկուայէ ալ կը ծանուցուի թէ հունձքն սքանչելի պիտի լինի ի Ռուսիա:

— Պուլկարական խնդրոյ վիճակը ո՛ր եւ է վտփոխուելու կրած չէ գեռ: Սոփիայի կառավարութիւնը կը խորհի արդի աւորոշ կազմութեան վերջ մը տալու համար ի նիստ հրաւիրել մեծ Սոպրանիյէն Յունիս 21ին (Ն. Տ.) եթէ մեծ տէրութիւնը եւ մասնաւորապէս Ռուսիա մինչեւ այն ատեն ընտրելի մը չը ներկայեն:

— Կրեմլի պատուիրակը կը բանակցին ի Բ. Գուսն Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ՝ կրեմլական խնդրոյն կարգադրութեան համար: Մեծ տէրութիւնը առ այժմ հեռի են միջամտելէ:

— Ասանայի մէջ տիրող երաշտութեան պատճառաւ սովու նշաններ կ'երեւին, որ Կոյս. կառավարութեան ուշադրութիւնը կը գրաւեն:

— Նախարարաց խորհուրդը որոշեց Նիկոմիդիայէն մինչեւ Լնկիրու եւ անտի մինչեւ Տիգրանակերտ շինուելիք երկաթուղեաց արտօնութիւնն Հայաստան վաշայի երկաթուղեաց արտօնատիրոջ եւ անոր Փարիզի ընկերներուն տալ:

— Ի Պուլկարիս նոր դաւադրութիւն մը երեւան ելած է. այս պատճառաւ Խնամակալութեան անդամներէ գնդապետ Պ. Մուքրոյով ի Փիլիպէ հսկողութեան ներքեւ առնուած է:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ազգային Ժողովը այս Ուրբաթ օր գումարեցաւ ի Մայր Եկեղեցի Նախագահութեամբ Պատր. Փոխանորդ Իւթիւճեան Գեր. Տ. Գէորգ Մ. Վարդապետի եւ Ատենապետութեամբ Մեծ. Յ. Մէրեւի-Գուրիէֆէնտի:

Ընտրուեցան Նախաքննիչ Դիւանները, բայց Նշուածէմայ Կանոնադրին վրայ վիճաբանութիւնը չկրցաւ կատարիլ, որովհետեւ 24 որոշող ձայն չունէր ժողովը:

Բացակայութեանց պատճառ կենթադրեն ոմանք ժողովատեղւոյն հեռաւորութիւնը, սակայն կայ ուրիշ զօրաւոր պատճառ մ'ալ, այն է, պակասեալ Նրեթփոխանաց տեղ նոր ընտրութիւն չկատարուիլը:

— 416 —

կուծիւնը Բաթերինի համար լուսոյ շաւիղ մ'էր, ըստ պարագային շարժեցաւ:

Ուրեմն Հանրի տը Վիլլըթանէօղ պաշտօնապէս ներկայացուած էր պարոն և տիկին Ժուֆրուայի՝ ինչպէս և Օսէլիի:

Հօրաքոյր Բուլտանն, հակառակ իւր եղբոր թախանձանայ՝ մերժեց ընտանեաց սոյն հանգիսին ներկայ դառնուիլ: Մարիան գլխու ցաւ մը պատրուակ ընկելով՝ իւր հօրաքեռ քով մնաց, և մօրն հետ ունեցած դառն խօսակցութեան վրայ իւր քրոջն բաւ մ'իսկ չ'ըսաւ: Մայրն վստահ ըլլալով թէ պիտի կարենայ յաղթել Մարիանի յամառ ընդմիտեան և զայն վանք պիտի կրնայ դնել՝ կարծեց թէ կրնար հաստատապէս բսել առ պարոն Ժուֆրուայ թէ իւրեանց աղջիկն կրօնական հաստատութեան մը մէջ քաշուիլ ու զելով՝ դրամօժիտին խնդիրն յաջողապէս կարգադրուած էր, ըստ որում մէկ աղջիկ մը միայն պիտի ունենային օժտելու: Պարոն Ժուֆրուայ թէպէտ վշտացաւ, սակայն քիչ շարմացաւ Մարիանայ կարծեցեալ որոշման վրայ, ըստ որում Մարիան մինչ ցայն վայր իւր մենասիրութեամբ և խօթութեամբ խոր-

— 413 —

մթութեան, քանզի զրեթէ գիշերն հասած էր, կրցաւ՝ առանց եղբայր Ռուսէլէ նշմարուելու՝ Հայր Լուանսիէնի ձեռքն բռնել. իւր շրթանց տարաւ. զայն, և վարկեան մը աշակերտին բանտարկուած սենեկին դրան առջև կանգ առնելէն վերջ՝ հասցէտու մեկնեցաւ:

— Ո՛հ, պարոն Ռուսէլ. — գոչեց Հայր Լուանսիէն երբ ժողովի հետ մինակ մնաց:

— Եկէք, եկէք, պարոն Փօղիւնէի սենեակը երթանք:

— Յուսահատ տուն մտաւ, այնպէս չէ:

— Ո՛հ, այո՛. . . բայց յոյսն յուսաւ հատուկեան պիտի յաջորդէ:

— Ի՛նչ ըսել կուզէք:

— Եկէք, եկէք, հոն է, իւր սենեակըն է: Ոչ նա և ոչ դուք, ձեզ իմացներէքս մտքերնուդ չանցուցած. . . , եկէք, եկէք:

Եւ Փօղիւնէ Սովալի սենեակն մտաւ ընդ եղբայր Ռուսէլի որ ևս քան զիս զարմացած էր ձեր արուեստաւորին խօսքերէն:

Եթէ այսպէս շարունակէ, շատ հաւանական է թէ օր մ'ալ 10ը Երեւոյի մասին ներկայութեամբ ժողով լինի:

Սակայն Հայ-Ազգը Սահմանադրական է եւ Վարչութիւնը երեսօրօխանական:

Պ Ա Տ Ո Ւ Ա Ն Շ Ա Ն

Գոհութեամբ կրօնականք թէ՛ Վեհ. Սուլթանը քարեհաճեցաւ Բ. կարգի Շէ-Փազաթի պատուանշան շնորհել Իւր անձնական Գանձուն Նախարար Գաղաղեան Բարձր. Յակոբ փաշայի մօր՝ Ազնուա. Տիկին Նեկտար Գաղաղեանի:

Մ Կ Ր Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Յակոբեան Ազնուաշուք Միքայէլ է-Ֆէնտիի նորածին դստեր մկրտութիւնը կատարուեցաւ այս Հինգշաբթի առաւօտ Բերայի Ս. Յարութիւն Եկեղեցին կնքահայրութեամբ Արմաշու Վանահայր Աշրգեան Գեր. Տ. Խորէն Սրբազանի եւ ի ներկայութեան բաղմաթիւ Եկեղեցականաց:

Նորածին երախայի անունն Իսկուհի Փեփրոնէ դրուեցաւ:

ԲԱՐՁՐ. ԱՐԲԱՀԱՄ ՓԱՇԱ

Մեծաւ գոհութեամբ կը տեղեկանանք թէ Ն. Բարձրութեան հիւանդութիւնն անցուցած է տան վտանգ եւ թէ ասպրինաման վիճակի մէջ կը գտնուի:

Կատարեալ առողջութիւն կը մաղթենք:

ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Այս Հինգշաբթի օր Ազգ. Պատրիարքարանի մէջ կատարուեցաւ Մախսուէի վարչութեան Գանձապետ Ասլանեան Ազնուամեծար Յարութիւն էֆ.ի նշանախօսութիւնն ընդ Ազն. Օր. Սրբուհի Ս. Աբահամեանի ի ներկայութեան երկու կողման ազգականաց եւ բարեկամաց:

Հարսանեաց հանդէսը պիտի կատարուի յառաջիկայ երկուշաբթի յիւսկիւտար:

Զ Ե Կ Ո Յ Ց

Նախորդ թուով խոստացեալ ուշադրաւ յօդուածի հրատարակութիւնը՝ նկատմամբ ամուսնական ինդոյ մ'առթիւ Բողոքական պատուելեաց ոմանց աղաքամոհմութեամբ՝ յառաջիկայ թուով մնացած է ինչ ինչ լրացուցիչ տեղեկութեանց յատկադման պատճառաւ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՐԲԱՀԱՄ ՄԻԶՐԱՆ ԻՓԷՆՏԻԻ
ԹԻԻՃՃԱՐ ԵԱԶԸՃԱՐ

Սոյն գործ որ թէ Հայաստան եւ թէ Թրքա առ է կը պարունակէ առեւտրական այլ եւ այլ մուհակներ, պայմանագրեր, աղերսագրեր. նաւակներ, եւ ի վերջոյ բաւառեալ մը ուր ամբողջ գործոյն մէջ զանաւոր բաւերուն խմատներն թէ Հայերէն եւ թէ Գաղղիարէն բացատրուած են, Գին 5 զր:

Նոյնպէս՝ հրատարակուեցաւ Միհրան էֆէնտի Աբիկեանի Կիւլտէսթէի Մուհարէրաթի բէմիկէ վէ զոյրի բէս միէ անուն նրկասիրութիւնը:

Գին 5 զրուշ

Յ. Թ. ՉԱԽՄԸՇԵԱՆ

ՆՈՐՈԳԻՉ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՆԻԻԹՈՑ ԵՒ
ԿԱՐԱՍԵԱՑ

Այաճա Համամ քիւ 16

ՃԻՂԳ ՍԱՊՈՆՃՈՒ ԽԱՆԻ ԴԷՄԸ

Յիշեալ վաճառատան մէջ կը նորոգուին եւ կը շինուին ու կը մաքրուին ամեն տեսակ կարասիք, ինչպէս են կաղի եւ իւղի լանպաներ, մահճակալ, աշտանակ եւ զինգոյէ, թիթեղէ եւ պղինձէ ամեն տեսակ անօթ:

Վաճառատան մէջ կը ծախուին Եւրոպական զանազան տեսակ կաղի եւ իւղի լամպաներ, պարզ եւ ընտիր, խիստ արժանի, Յաճախորդաց դիւրութիւն տալու համար 0/0ին 5-10 միլիչեւ իսկ 18 դեղէ կ'ըլլայ:

ԱՐՏՕՆԱՏԻՐ Մ. Յ. ՄԵԼԻՔԵԱՆ

ՏՆՕՐԷՆ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

Լ. Բ.

Նոյն օրուան իրիկունը, Հանրի տը Վիլթմանէօղ, իբր խօսնայր Օռէլիի, հանգիստապէս ժուֆրուտ ընտանեաց պիտի ներկայանար իւր հօրեղբոր միջոցաւ:

Անցեւոյն վրայ երկու բառ ըսենք:

Կը յիշուի թէ, այն առաւօտ որ Հանրի տը Վիլթմանէօղ իւր հօրեղբոր հետ տեսակցութիւն մ'ունեցած էր, շատ յամառութիւն ցոյց տուած էր մարքիլին առաջարկած ամուսնութեան դէմ, եւ բացարձակապէս՝ իւր հաւանութիւնը տիկին տը Մօւլաբի հաւանութենէն կախեալ կը նկատէր, այն կինն՝ որոյ ազգեցութեան ներքե կը գտնուէր կուլարար:

Քաթերին, Միշէլի մեկնելէն վերջն՝ իւր ուշաթափութենէն սթափելով՝ միայն նորա վրայ եւ զայն վերստին տեսնելու միջոցներուն վրայ մտածած ըլլալով՝ կոմսն իւր տունէն արտաքսեց՝ չուզելով նորա եւ ոչ մի խօսքն լսել եւ արգիլելով նմա անգամ մ'ալ իւր տունն ոտք չի կոխել: Կոմսն, տիկին տը Մօւլ-

լարի քմահաճոյքէն բարկացայտ՝ տունէն մեկնեցաւ եւ մարքիլին բնակարանը վերադարձաւ: Խորամանկ ծերունին, իւր եղբորորդուն զայրացմանէն օգուտ քաղելով՝ կըցաւ վերջապէս ամուսնութեան հաւանութիւնն առնուլ, տիկին ժուֆրուայի տունը վաղեց, դործն իրար անցուց, ինչպէս տեսան ընթերցողք, Օռէլիի խօսքն առաւ, եւ որպէս զի Հանրի տը Վիլթմանէօղի, իւր որոշմանէն հըրաժարելու ժամանակն կամ առիթն չը թողուէր երեկոյն նորա տունը դարձաւ, եւ իւր ձեռնարկին յաջողութիւնն իմացուց անոր, զայն իրեն հետ իւր երաստը (քիւլալ) տարաւ ճաշելու, եւ ժամը իննին տիկին ժուֆրուայի տունը դնացին իմիասին:

Տիկին տը Մօւլաբ հաւատարիմ իւր այն խօստման՝ զոր ըրած էր առ հայր Լօւանսիէն կոմսին ամուսնութիւնն խղելու մասին, ուղղակի Հանրի տը Վիլթմանէօղի տունը գացած էր եւ զայն հոն չը գտնելով, իւր ծառայն խօսեցնել տուաւ, իմացաւ որ ինք հրաման ընդունած էր երեկոյն կառքով մը երթալ եւ զինք սլարոն ժուֆրուայի տան առջեւ ի Մօն-Պլան փողոց սպասել: Այս տեղե-